

ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼՎԱՐԴ ՀՈՒՄԻԿԻ

ՌՈՏԱԿԻՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ԿԼԻՆԻԿԱԼԱԲՈՐԱՏՈՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ
ՑԻՏՈԿԻՆԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԴԻՆԱՄԻԿ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԴ.00.03 <<Ներքին հիվանդություններ>>

մասնագիտությամբ

բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ МЕДИЦИНСКИЙ УНИВЕРСИТЕТ

им. М. ГЕРАЦИ

ОГАНЕСЯН АЛВАРД УСИКОВНА

КЛИНИКО-ЛАБОРАТОРНАЯ ХАРАКТЕРИСТИКА РОТАВИРУСНОЙ ИНФЕКЦИИ
И ДИНАМИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ ЦИТОКИНОВОГО ОТВЕТА

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата медицинских наук по
специальности

14.00.03 “ВНУТРЕННИЕ БОЛЕЗНИ”

ЕРЕВАН 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ ր.գ.դ., պրոֆ. Ն.Մ. Գյուլազյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ր.գ.դ., պրոֆ. Է.Հ. Գրիգորյան

ր.գ.դ., պրոֆ. Գ.Գ. Մելիք-Անդրեասյան

Առաջատար կազմակերպություն՝ Արաբկիր բժշկական համալիր, երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. մարտի 23-ին ժամը 14⁰⁰ ԵՊԲՀ-ում գործող ՀՀ ԲՈՀ-ի 028 «Թերապիա» մասնագիտական խորհրդի նիստում (ՀՀ, ք. Երևան, 0025, Կոռյունի փ. 2):

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ԵՊԲՀ-ի գրադարանում:
Մեղմագիրն առաքված է 2017թ. փետրվարի 22-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝

ր.գ.թ. Լ.Գ. Թունյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном медицинском университете имени М. Гераци.

Научный руководитель: д.м.н., профессор Н.М. Гюлазян

Официальные оппоненты: д.м.н., профессор Э. Г. Григорян

д.м.н., профессор Г.Г. Мелик-Андреасян

Ведущая организация: Медицинский комплекс «Арабкир», институт здоровья детей и подростков

Защита диссертации состоится 23 марта 2017г. в 14⁰⁰, на заседании Специализированного Совета ВАК РА 028 “Терапия” при ЕрГМУ (РА, г. Ереван, 0025, ул. Корюна 2).

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕрГМУ.
Автореферат разослан 22 февраля 2017г.

Ученый секретарь
специализированного совета

к.м.н. Л.Г. Тунян

Արդիականությունը.

Սուր աղիքային վարակները կարևորագույն առողջապահական, սոցիալական և տնտեսական խնդիր են ամբողջ աշխարհում: Ըստ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության տարեկան 1,7 մլրդ մարդ հիվանդանում է սուր աղիքային վարակով, որից 760 հազարը մահանում են [Диарея, Информационный бюллетень № N°330, WHO, 2013; April Kilgore, S. Donauer et al. 2013; Rheingans R., Kukla M., A. Faruque et al, 2012]: Սուր աղիքային վարակների կազմում հետզհետե աճում է վիրուսային ծագման դիարեաների տեսակարար կշիռը [Ramani S., Kang G., 2009; Zhioda K., Cosmas L., et al., 2016; Дорошина Е.А., 2009]: Ռոտավիրուսը մանկական հիվանդացության և մահացության հիմնական պատճառներից մեկն է [World Gastroenterology Organisation practice guideline, 2008; Parashar U. et al., 2003; CDC, The Pink Book: 13th Edition, 2015]: Ռոտավիրուսային վարակի (ՌՎՎ) դեպքերը հավասարաչափ գրանցվում են բոլոր երկրներում, սակայն նրանից առաջացած բարդություններն ու մահվան դեպքերը հիմնականում գրանցվում են զարգացող երկրներում, որտեղ տնտեսական վնասը հասնում է առավելագույն թվերի [Chun-Yi Lu, T. Lauderdale, et al., 2006; Atanacio V., M. Bertozzi, 2008]: Լայնածավալ օբսերվացիոն հետազոտությունների արդյունքները վկայում են ռոտավիրուսի սերոտիպերի և գենոտիպերի տեսակների զգալի տարբերության մասին՝ կախված աշխարհագրական դիրքից [Shinjiro H. et al., 2007]: Նկարագրվում են նաև վիրուսի նոր տարբերակների առաջացման դեպքեր, որոնք կարող են հետագայում կարևոր համաճարակաբանական նշանակություն ունենալ [Жириковская Е.В., Никифорова Н.А., 2007; Жираковская Е.В., Тикуннов А.Ю., 2014]: Մեր երկրում հիմնականում տարածված են P8G1 և P8G4 գենոտիպերը [Պատվաստումների ազգային օրացույցում ՌՎ պատվաստումների ներդրման ազգային խորհրդակցություն, 2012թ. հունիսի 27]: Հիվանդության հիմնական կլինիկական ախտանիշների արտահայտվածությունն ու տևողությունը կախված են նաև վիրուսի գենոտիպից [Полянская Н.А., 2011; Gianvincenzo Z., 2010]: Եթե նախկինում ախտահարման հիմնական և միակ թիրախ համարվում էր բարակ աղին, ապա ներկայումս հետազոտությունները փաստում են վիրուսի համակարգային ազդեցությունների մասին՝ ուղեղի այտուց, պանկրեատիտ և այլն: Ըստ որոշ հեղինակների՝ ՌՎՎ մինչև մեկ տարեկան երեխաների գրեթե կեսի մոտ ընթանում է պայմանական պաթոգեն կամ պաթոգեն միկրոֆլորայի հետ զուգակցված, ինչը բերում է դիարեային համախտանիշի տևողության երկարացմանը և արտահայտվածությանը, բարդությունների առաջացմանը և կղանքով վիրուսի երկարատև անջատմանը: Այս տարիքային խմբում նկատվում է նաև սեկրետոր IgA սինթեզի նվազում, ինչը վկայում է տեղային իմունիտետի ընկճման մասին: Վերջինս կարևորում է հիվանդության ախտածագումնաբանական և իմունաբանական ասպեկտների ուսումնասիրությունը՝ հիվանդության էլքի և հնարավոր բարդությունների կանխատեսման համար [Kogan H. B., 2009, Полянская Н.А., 2011]: Միջազգային գրականությունը հիմնականում ուղղված է ՌՎՎ համաճարակաբանական և ախտորոշման խնդիրների վերլուծությանը, մինչդեռ այս վարակի կլինիկական ընթացքի, ախտածագումնաբանության, իմուն պատասխանի՝ մասնավորապես ցիտոկինային պատասխանի ուսումնասիրությանն ուղղված աշխատանքները

բավականին սակավ են, իսկ տվյալները՝ հակասական [Jiang B. et al., 2003; Жидков Е. М., 2008; Бабик Р.К., 2011]: Այդ իսկ պատճառով կարևորվում է ՌՎԳ կլինիկալաբորատոր բնութագրի և ցիտոկինային պատասխանի առավել մանրամասն ուսումնասիրությունը:

Նպատակը.

Ռոտավիրուսային վարակի կլինիկալաբորատոր բնութագրի և ցիտոկինային պատասխանի դինամիկայի ուսումնասիրությունը:

Խնդիրները.

1. Ուսումնասիրել ռոտավիրուսի՝ Հայաստանում շրջանառող տարբերակներով պայմանավորված վարակի համաճարակաբանական, կլինիկական և լաբորատոր բնութագիրը հիվանդների ընդհանուր խմբում:

2. Վերլուծել ԻԼ-2, ՌԻՆԳ- α և ԻԼ-10 ցիտոկինների նորմայից բարձրացման հայտնաբերման հաճախականությունը, միջին մակարդակների փոփոխությունները ինչպես հիվանդության սուր և լավացման շրջանում, այնպես էլ ըստ հիվանդության օրերի՝ հիվանդների ընդհանուր խմբում:

3. Հետազոտել ԻԼ-2-ի, ՌԻՆԳ- α -ի և ԻԼ-10-ի միջին մակարդակները՝ կախված ռոտավիրուսային վարակի հիմնական կլինիկական ախտանիշների տևողությունից և արտահայտվածությունից:

4. Համեմատել ռոտավիրուսային վարակի կլինիկական բնութագիրը, ցիտոկինների նորմայից բարձրացման հայտնաբերման հաճախականությունը և միջին մակարդակների փոփոխությունները դինամիկայում երեխաների տարբեր տարիքային խմբերում:

5. Համեմատել ռոտավիրուսային վարակի կլինիկական բնութագիրը, ցիտոկինների նորմայից բարձրացման հայտնաբերման հաճախականությունը և միջին մակարդակների փոփոխությունները դինամիկայում մոնո- և համակցված ռոտավիրուսային վարակի դեպքում:

Գիտական նորույթը.

Նկարագրվել է ռոտավիրուսային վարակի կլինիկական բնութագիրը մեր երկրում շրջանառող վիրուսի տարբերակների պայմաններում, նկարագրվել են արյան ձևավոր տարրերի դինամիկ փոփոխություններն ըստ հիվանդության օրերի: Առաջին անգամ համեմատվել են ԻԼ-2-ի, ԻԼ-10-ի և ՌԻՆԳ- α -ի միջին մակարդակներն ըստ հիվանդության օրերի և հիվանդության սուր և լավացման շրջաններում՝ ինչպես հիվանդների ընդհանուր խմբում, այնպես էլ երեխաների տարբեր տարիքային խմբերում և վիրուս-բակտերիալ համակցված վարակի դեպքում: Ուսումնասիրվել են վերոհիշյալ ցիտոկինների միջին մակարդակները՝ կախված ՌՎԳ հիմնական կլինիկական ախտանիշների տևողությունից և արտահայտվածությունից: Առաջին անգամ կատարվել է արյան ձևավոր տարրերի և ԻԼ-2-ի, ՌԻՆԳ- α -ի և ԻԼ-10-ի կորելյացիոն կապերի ուսումնասիրություն՝ ըստ հիվանդության օրերի:

Աշխատանքի գործնական նշանակությունը.

Աշխատանքում ներկայացված տվյալները վկայում են, որ, անկախ ռոտավիրուսի պատվաստում ստանալու փաստից, սուր աղիքային վարակով բոլոր երեխաներին պետք է հետազոտել կղանքում ռոտավիրուսի անտիգենի հայտնաբերման վերաբերյալ: Փոքր տարիքի երեխաներին (մինչև 2 տարեկան) և համակցված վարակով հիվանդներին վարելիս անհրաժեշտ է ցուցաբերել առավել մասնահատուկ մոտեցում՝ կապված

կլինիկական ընթացքի առանձնահատկությունների հետ, որը կնպաստի հոսպիտալացման տևողության կրճատմանը և բարդությունների կանխմանը: Մինևս ժամանակ անհրաժեշտ է կազմակերպել ՌՎՎ հիվանդների հսկողություն ստացրածներից դուրս գրվելուց հետո, քանի որ, ինչպես վկայում են աշխատանքի տվյալները, իմուն բորբոքային գործընթացները շարունակվում են նույնիսկ կլինիկական լավացման շրջանում և կարող են հետագա բարդությունների պատճառ հանդիսանալ:

Աշխատանքի նախնական փորձաքննությունը.

Ատենախոսական թեզի նախապաշտպանությունը տեղի է ունեցել **17.06.2016թ.** ԵՊԲՀ գիտակոորդինացիոն խորհրդի նիստում: Աշխատանքի հիմնական դրույթները և արդյունքները բանավոր զեկույցով ներկայացվել են 2014թ. հոկտեմբերի 24-25 կայացած Հայաստանի մանկական բժիշկների կոնֆերանսում, 2014թ. նոյեմբերի 1-4 Վիենայում կայացած սպառնացող հիվանդությունների միջազգային գիտաժողովում (IMED)՝ պոստերի տեսքով:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը.

Աշխատանքը շարադրված է համակարգչային **120** էջում, կազմված է հինգ գլխից՝ ներառելով ներածություն, գրականականության տեսություն, հետազոտության նյութ և մեթոդներ, սեփական հետազոտության արդյունքներ, եզրակացություններ, գործնական առաջարկություններ, **134** սկզբնաղբյուրներ պարունակող գրականության ցանկ: Աշխատանքը ներկայացված է **21** աղյուսակներով և **16** նկարներով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Հետազոտության նյութ են հանդիսացել 126 հիվանդներ, որոնք 2014թ. փետրվարից հունիս ընկած ժամանակահատվածում ընդունվել են <<Նորք>> ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի մանկական բաժանմունքներ ՌՎՎ ախտորոշմամբ: Ընդգրկման պայման հանդիսացել է կղանքում ՌՎ անտիգենի հայտնաբերումը ԻՖՍ մեթոդով, բացառման պայման՝ այդ անտիգենի բացակայությունը: Հիվանդների 54,8%-ը կազմել են արական սեռի ներկայացուցիչները, մնացածը՝ իգական: Միջին տարիքը եղել է 28,7±13,3 ամսական, նվազագույնը՝ 4 ամս., առավելագույնը՝ 60 ամս.: Ընդունվել են միջինում հիվանդության 3±1 օրը: Հոսպիտալացման միջին տևողությունը կազմել է 6,5±2,5 մ/օր, դուրս են գրվել կլինիկական լավացմամբ: Հետազոտված հիվանդների գերակշռող մեծամասնության մոտ (87,3%) հիվանդությունն ընթացել է տիպիկ՝ գաստրոէնտերիտիկ տարբերակով, դիտվել են նաև գաստրիտիկ (2,4%), էնտերիտիկ (3,9%), գաստրոէնտերոկոլիտիկ (3,9%) և էնտերոկոլիտիկ (2,4%) տարբերակները: Հիվանդների ջրազրկման ծանրությունը որոշվել է ըստ Գաստրոէնտերոլոգների համաշխարհային կազմակերպության և ԱՀԿ-ի ուղեցույցների [Acute diarrhea//World Gastroenterology Organization practice guideline: March 2008]: Ուսումնասիրված հիվանդների կեսից ավելիի մոտ (54,8%) դիտվել է թեթև արտահայտված ջրազրկում, 36,5%-ի մոտ ջրազրկման նշաններ չեն դիտվել, իսկ մնացած հիվանդների մոտ հայտնաբերվել է արտահայտված ջրազրկում: Հիվանդներին կատարվել է պաթոգենետիկ և սիմպտոմատիկ բուժում՝ հիմնականում պարէնտերալ ռեհիդրատացիայի միջոցով, էթիոտրոպ բուժումը բացակայում է [Диарея. Апрель 2013г. Информационный бюллетень N330 ВОЗ]: Համապատասխան հետազոտության խնդիրների՝ հիվանդները բաժանվել են

տարբեր խմբերի՝ ըստ տարիքի և ըստ կղանքում բակտերիալ վարակի առկայության: Ըստ տարիքի բաժանումը կատարվել է՝ ելնելով <<ՀՀ ՌՎՎ դետքային համաճարակաբանական հսկողություն>> ԱՀԿ-ի հետ համատեղ ծրագրի ցուցումների՝ մինչև 2տ. և 2-5տ. [Ստոյան Ա.Վ., Պատվաստումների ազգային օրացույցում ՌՎ պատվաստումների ներդրման ազգային խորհրդակցություն, 2012թ.]: Ըստ բակտերիալ վարակի առկայության հիվանդները բաժանվել են 2 խմբի՝ մոնովարակով և համակցված վարակով: Մոնովարակով խմբում ընդգրկվել են այն հիվանդները, որոնց կղանքի բակտերիաբանական հետազոտությամբ պաթոգեն կամ պայմանական պաթոգեն միկրոօրգանիզմներ չեն հայտնաբերվել: Համակցված վարակով խմբում ընդգրկվել են այն հիվանդները, որոնց կղանքում, ՌՎ անտիգենի առկայությանը զուգահեռ, հայտնաբերվել են պաթոգեն կամ պայմանական պաթոգեն միկրոօրգանիզմներ: Ըստ ախտանիշների հաճախականության և արտահայտվածության բոլոր հիվանդները բաժանվել են օգտագործելով հանրընդունված դասակարգումները [Шывалова Е.П., 2005]. Ըստ տենդի արտահայտվածության՝ սուբֆերիլ, ֆերիլ և հիպերֆերիլ ջերմոդներ, ըստ լուծի և փսխման հաճախականության՝ 0-5, 6-10 և 11 և ավել անգամ լուծողներ և փսխողներ: Ըստ ախտանիշների տևողության հիվանդները բաժանվել են՝ ախտանիշների տևողությունը մինչև 5 օր և 5 օր և ավել:

Բոլոր հիվանդներին կատարվել է օբյեկտիվ գնում, աղիքային վարակների դեպքում ցուցված ռուտինային հետազոտություններ (արյան, մեզի, կղանքի ընդհանուր, արյան բիոքիմիական (գլյուկոզա, ընդհանուր սպիտակուց և այլն), կղանքի բակտերիաբանական քննություն), ինչպես նաև յուրահատուկ հետազոտություններ (կղանքի ԻՖՍ Rida-Quick և Oxoid թեստ համակարգերով՝ ռոտավիրուսի անտիգենի հայտնաբերման նպատակով, արյան շիճուկում ԻԼ-2, ՌԻՆԳ- α և ԻԼ-10 մակարդակի որոշում ԻՖՍ-ով Bektov-Bect թեստ համակարգով): Արյան ընդհանուր քննություն կատարվել է բոլոր հիվանդներին՝ հոսպիտալացման առաջին օրը՝ հիվանդության սուր փուլում (հիվանդության 4 \pm 1 օրը) և 23 հիվանդի ստացիոնարից դուրս գրվելիս՝ լավացման շրջանում (հիվանդության 8 \pm 1 օրը): Արյան շիճուկում ցիտոկինների միջին մակարդակի որոշումը նույնպես կատարվել է հիվանդության սուր (93 հիվանդ) և լավացման (68 հիվանդ) շրջաններում: Որպես ցիտոկինների նորմալ մակարդակ՝ վերցվել է թեստ համակարգում նշված նորման՝ ԻԼ-2-ինը՝ 0 պգ/մլ, ՌԻՆԳ- α -ինը՝ 0,5 պգ/մլ և ԻԼ-10-ինը՝ 5 պգ/մլ: Ըստ ցուցումների կատարվել է ՌԻՉՀ (25 հիվանդ) և Ռ-գրաֆիա (28 հիվանդ):

Ստացված տվյալները մուտքագրվել են Excel ծրագրի բազա, վերլուծվել՝ SPSS16, STATA12 և Excel 2013 համակարգչային ծրագրերով: Նկարագրողական վերլուծության համար ներկայացվել են շարունակական տվյալների միջինը, ստանդարտ շեղումը, մինիմալ և մաքսիմալ սահմանները, իսկ կատեգորիական փոփոխականների դեպքում՝ տոկոսային հարաբերությունը: Համեմատական վերլուծությունը իրականացվել է Մոյտլդենտի Թ-թեստի և Քայ Սքէյր անալիտիկ մեթոդների միջոցով: Ոչ պարամետրիկ տվյալների համար օգտագործվել են Մեն Վիտնի և Վիլկոքսոնի թեստերը: Միևնույն մարդու մոտ միևնույն ցուցանիշի ժամանակային փոփոխությունը նկարագրելու համար իրականացվել է զույգավորված Թ-թեստ Վիլկոքսոնի մեթոդով: Մի քանի խմբերի աճող տվյալների համեմատության համար օգտագործվել է ANOVA: Պիրսոնի և Սպիրմանի կորելացիոն վերլուծությունը իրականացվել է երկու փոփոխականների երկկողմանի ազդեցությունը ուսումնասիրելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ


Հետազոտության իրականացման ժամանակահատվածում ամենաբարձր դիմելիությունը գրանցվել է ապրիլ և մայիս ամիսներին: Հիվանդների 71,4%-ը հոսպիտալացվել են առաջին երեք օրերին, ինչը վկայում է հիվանդության սուր սկզբի մասին [Васильев Б.Я., 2000]: Համաճարակաբանական անամնեզի ուսումնասիրությամբ պարզվել է, որ երեխաների 19,8%-ը ունեցել են շփում նմանատիպ ախտանիշներով ընտանիքի անդամների հետ պայմանավորելով ՌՎՎ փոխանցման շփումնակենցաղային ճանապարհը: Հիվանդների 19%-ը ստացել է ՌՎ պատվաստանյութ և, չնայած այդ հանգամանքին, վարակվել է ՌՎ-ով, ինչը կարող է վկայել ՌՎ ոչ պատվաստումային գենոտիպով վարակման մասին [Жиряковская Е.В., 2007]: Օբյեկտիվ գնմամբ գրեթե բոլոր հիվանդների մոտ առկա է եղել կլինիկական ախտանիշների տրիադան՝ տեղ (96%), փսխում (92,1%) և լուծ (96,8%): Տենդր առավելապես եղել է ֆեբրիլ (72,2%), միջինում տևել է 4±2 օր: Փսխման միջին տևողությունը կազմել է 3±1 օր, հաճախականությունը՝ 5±3, լուծի միջին տևողությունը՝ 5±3 օր, հաճախականությունը՝ 6±3: Տիպիկ կլինիկական ախտանիշներին զուգահեռ, հիվանդների 17,5%-ը ունեցել են կատառալ երևույթներ՝ քթահոսության, քթով դժվարացած շնչառության և բկանցքի հիպերեմիայի տեսքով:

Հիվանդների արյան ընդհանուր քննության ցուցանիշների միջին արժեքների նորմայից շեղում դիտվել է հետևյալ բաղադրիչների պարագայում՝ հեմատոկրիտի և էրիթրոցիտների միջին ծավալի միջին արժեքները եղել են նորմայից փոքր-ինչ ցածր, իսկ մոնոցիտների և գրանուլոցիտների միջին արժեքները՝ նորմայից բարձր: Համեմատելով հիվանդության սուր և լավացման շրջաններում արյան ընդհանուր քննության ցուցանիշների միջին արժեքները՝ պարզվել է, որ հիվանդության լավացման շրջանում դիտվել է հեմոգլոբինի ($p=0,0029$), հեմատոկրիտի ($p=0,009$) և գրանուլոցիտների ($p=0,0003$) մակարդակների հավաստի նվազում:

Առաջին անգամ ուսումնասիրվել են արյան ընդհանուր քննության ցուցանիշների փոփոխություններն ըստ հիվանդության օրերի: Դիտվել է լեյկոցիտների քանակի վիճակագրորեն հավաստի նվազում հիվանդության 2-րդ և 3-րդ օրերին՝ առաջին օրվա համեմատությամբ: Նեյտրոֆիլների քանակը նույնպես հավաստիորեն իջել է դինամիկայում, իսկ լիմֆոցիտներինը՝ հավաստի բարձրացել [նկար 1]:

Նկար 1

Արյան ընդհանուր քննության ցուցանիշներն ըստ հիվանդության օրերի ՌՎՎ հիվանդների շրջանում



Արյան բիոքիմիական քննության բոլոր ուսումնասիրված ցուցանիշների միջին մակարդակները եղել են նորմայի սահմանում: Կոպրոլոգիական հետազոտությամբ լեյկոցիտների միջին քանակը կազմել է 5 ± 2 տեսադաշտում, հիվանդների 3,2%-ի մոտ եղել են էրիթրոցիտներ, 2 հիվանդի մոտ էլ դիտվել է տեսանելի արյուն: Կղանքի բակտերիաբանական հետազոտության արդյունքներից պարզվել է, որ հիվանդների գերակշռող մեծամասնության մոտ (81,7%) հիվանդությունն ընթացել է մոնովարակի տեսքով: Մնացած հիվանդների մոտ այն զուգակցվել է պաթոգեն կամ պայմանական պաթոգեն միկրոֆլորայի հետ, որոնցից կեսից ավելիի մոտ (56,5%) անջատվել է ոսկեգույն ստաֆիլոկոկ, 21,7%-ում՝ *Salmonella*, եզակի դեպքերում՝ *Morganela*, *Proteus* և *Shigella*:


Հետազոտված ցիտոլիինների (ՑԿ) մակարդակը ընդհանուր խմբում ուսումնասիրելիս պարզվել է, որ սուր փուլում հիվանդների մեծ մասի մոտ (71,2%) հայտաբերվել է միայն մեկ ՑԿ-ի մակարդակի նորմայից բարձրացում՝ առավել հաճախ ԻԼ-10-ը (69,1%), որին հաջորդել է ՌԻՆԳ- α -ն (2,1%), միայն ԻԼ-2-ի բարձրացում չի դիտվել: Միաժամանակ երկու ՑԿ-ի մակարդակի բարձրացում նորմայից դիտվել է 20,6%-ի մոտ, հետևյալ զուգակցումներով՝ ՌԻՆԳ- α +ԻԼ-10 (15,5%), ԻԼ-2+ԻԼ-10 (4,1%) և ԻԼ-2+ՌԻՆԳ- α (1%): Հիվանդների 4,1%-ը ունեցել են միաժամանակ երեք ՑԿ-ի մակարդակի բարձրացում նորմայից, նույնքանի մոտ էլ դիտվել են բոլոր ՑԿ-ների նորմալ մակարդակներ: Ընդհանուր առմամբ, ԻԼ-10-ի նորմայից բարձրացում ունեցել են հիվանդների 92,8%-ը, ՌԻՆԳ- α -ի բարձրացում՝ 22,7%, ԻԼ-2-ի՝ 9,2%-ը:

Հիվանդության լավացման շրջանում ընդհանուր խմբում հիվանդների 61,7%-ի մոտ հայտնաբերվել է միայն մեկ ՑԿ-ի մակարդակի նորմայից բարձրացում, ընդ որում, ինչպես և հիվանդության սուր փուլում, գերակշռել է ԻԼ-10-ը (58,8%), ապա ՌԻՆԳ- α -ն (2,9%), իսկ միայն ԻԼ-2-ի մակարդակի բարձրացում չի դիտվել: Միաժամանակ երկու ՑԿ-ի մակարդակի բարձրացում նորմայից դիտվել է հիվանդների 32,4%-ի մոտ, գերակշռել է ՌԻՆԳ- α +ԻԼ-10 կոմբինացիան (29,4%): Երեք ՑԿ-ի մակարդակի միաժամանակյա բարձրացում նորմայից դիտվել է 1,5% դեպքերում, իսկ հիվանդների 4,4%-ի մոտ որևէ ցիտոլիին չի հայտնաբերվել: Այսպիսով, ՌԿՎ սուր շրջանում ցիտոլիինային հիմնական պատասխանը բնութագրվում է ԻԼ-10-ի սինթեզով, որը պահպանվում է նաև հիվանդության լավացման շրջանում:

Հիվանդության սուր փուլում ԻԼ-2-ի միջին մակարդակը կազմել է $0,3 \pm 1,0$ պգ/մլ, ՌԻՆԳ- α -ինը՝ $0,6 \pm 1,3$ պգ/մլ և ԻԼ-10-ինը՝ $33,1 \pm 39,2$ պգ/մլ: Բոլոր ՑԿ-ների միջին մակարդակները եղել են նորմայից բարձր: Լավացման շրջանում ԻԼ-2-ի միջին մակարդակը իջել է՝ կազմելով $0,2 \pm 1,3$ պգ/մլ, ԻԼ-10-ինը նույնպես իջել է՝ $20,5 \pm 19,1$ պգ/մլ, իսկ ՌԻՆԳ- α -ինը բարձրացել է՝ հասնելով $0,8 \pm 1,9$ պգ/մլ: ՑԿ-ների մակարդակների հավաստի տարբերություն սուր և լավացման շրջաններում չի դիտվել:

Ուսումնասիրվել են նաև ՑԿ-ների միջին մակարդակներն ըստ հիվանդության օրերի: Հենց առաջին օրվանից զգալի բարձր է եղել ԻԼ-10-ի միջին մակարդակը՝ կազմելով $34,0 \pm 31,7$ պգ/մլ: Հիվանդության 7-րդ օրվանից սկսած այն հավաստիորեն իջել է, սակայն շարունակել է մնալ նորմայից բարձր նաև լավացման շրջանում ($12,0 \pm 5,1$ պգ/մլ): ՌԻՆԳ- α -ն սկսել է բարձրանալ հիվանդության ընթացքում՝ հասնելով իր առավելագույն արժեքին հիվանդության 7-րդ օրը՝ $2,5 \pm 3,9$ պգ/մլ, ապա իջնել՝ հասնելով նորմայի 10-րդ օրը:


Ցիտոկինների միջին մակարդակները և դրանց համեմատությունն ըստ հիվանդության օրերի ՌՎՎ հիվանդների շրջանում



IL-2-ի պատասխանը առաջին 6 օրերին եղել է բավականին թույլ, իսկ 7-րդ օրվանից այն ընդհանրապես չի հայտնաբերվել արյան մեջ:

Քանի որ մեր հետազոտությունում և՛ արյան ձևավոր տարրերի, և՛ ցիտոկինների մակարդակներն ուսումնասիրվել են ըստ հիվանդության օրերի, հետաքրքրություն ներկայացրեց այս երկու ցուցանիշների կորելացիոն վերլուծությունը:

Կորելյացիոն կապեր՝ ցիտոկինների և արյան ձևավոր տարրերի միջև ըստ հիվանդության օրերի ՌՎՎ հիվանդների շրջանում



Հայտնաբերվել են հավաստի ուղիղ կորեյացիոն կապեր ԻԼ-2-ի և լեյկոցիտների, լիմֆոցիտների, ԻԼ-10-ի և մոնոցիտների միջև: Հակադարձ կորեյացիոն կապեր դիտվել են ՌԻՆԳ-α-ի և հեմոգլոբինի, հեմատոկրիտի, էրիթրոցիտների միջին ծավալի, էրիթրոցիտներում հեմոգլոբինի միջին քանակի, մոնոցիտների միջև [սկար 3]:

Մեր խնդիրներից մեկը եղել է նաև ՑԿ-ների միջին մակարդակների համեմատությունը կախված հիմնական կլինիկական ախտանիշների (տենդի, փսխման և լուծի) տևողությունից և արտահայտվածությունից հիվանդության դինամիկայում: Վերլուծելով տենդի բնութագիրը՝ պարզվել է, որ մինչև 5 օր տևողությամբ տենդ ունեցել են հիվանդների 64,8%-ը, մնացածը ջերմել են ավելի երկար, ընդ որում ջերմած հիվանդների զգալի մեծամասնությունը (82,9%) ունեցել է ֆեբրիլ տենդ: Հիվանդների կեսից ավելին (59,3%) ունեցել են 5 օր և ավել տևող լուծ, ընդ որում օրեկան մինչև 5 անգամ լուծ նշողները կազմել են 69,2%, 6-10 անգամ՝ 24,2%, իսկ 11 և ավել անգամ՝ 6,6%: Հիվանդների 18,6%-ի մոտ փսխումը պահպանվել է 5 օրից ավել, գերակշռող մեծամասնության մոտ (76,7%) օրեկան մինչև 5 անգամ, իսկ 5,8%-ի հաճախականությունը կազմել է 11 և ավել անգամ: Նշված խմբերում ցիտոկինների միջին մակարդակները ներկայացված են աղյուսակ 1-ում: Ինչպես երևում է աղյուսակից, կախված տենդի, փսխման և լուծի տևողությունից և արտահայտվածությունից, հիվանդության սուր փուլում վիճակագրորեն հավաստի տարբերություններ չեն բացահայտվել:

Աղյուսակ 1

Ցիտոկինների մակարդակների համեմատությունն ըստ տենդի, լուծի և փսխման տևողության և արտահայտվածության հիվանդության սուր փուլում

Բնութագիր			ԻԼ-2 (պգ/մլ)	ՈւՆԳ-α (պգ/մլ)	ԻԼ-10 (պգ/մլ)
Տենդ (n=88)	Տևողություն	մինչև 5 օր	0,2±0,9	0,6±1,3	29,9±37,5
		5 օր և ավել	0,4±1,1	0,5±1,3	39,5±42,2
	Արտահայտվածություն	Սուբֆեբրիլ	0,4±1,3	0,4±0,7	27,2±39,6
		Ֆեբրիլ	0,2±0,6	0,7±1,4	35,2±40,4
		Հիպերֆեբրիլ	1,1±1,6	0	29,0±26,8
Լուծ (n=91)	Տևողություն	մինչև 5 օր	0,2±1,0	0,4±1,0	28,7±26,8
		5 օր և ավել	0,3±1,0	0,7±1,5	37,0±46,1
	Հաճախականություն	0-5 անգամ	0,3±1,0	0,6±1,3	33,6±33,6
		6-10 անգամ	0,4±1,2	0,8±1,5	26,7±32,4
		11 և ավել	0	0,3±0,5	59,4±92,8
Փսխում (n=86)	Տևողություն	մինչև 5 օր	0,2±1,0	0,7±1,4	30,2±32,9
		5 օր և ավել	0,3±0,9	0,3±0,5	25,3±24,7
	Հաճախականություն	0-5 անգամ	0,3±1,1	0,7±1,5	32,1±34,8
		6-10 անգամ	0	0,3±0,5	18,9±13,2
		11 և ավել	0	0,5±0,7	23,3±14,44

Ցիտոկինները հետազոտվել են նաև հիվանդության լավացման շրջանում [աղյուսակ 2]: Այս խմբում մինչև 5 օր ջերմել են հիվանդների 60%-ը: Կրկին գերակշռել են ֆեբրիլ տենդ ունեցողները՝ 81,5%, հիպերֆեբրիլ ջերմոդներ չեն եղել: Լուծը պահպանվել է 5

օրից ավել հիվանդների 65,2%-ի մոտ, ընդ որում 63,6%-ի մոտ՝ մինչև 5 անգամ, իսկ 6,1%-ի մոտ՝ 11 անգամից ավել: Փսիխումը պահպանվել է 5 օր և ավել հիվանդների 22,6%-ի մոտ, դարձյալ գերակշռել են մինչև 5 անգամ փսիխոզները՝ 74,2%, սակայն 8,1%-ի մոտ փսիխումները կրկնվել են 11 և ավել անգամ: ՑԿ-ների միջին մակարդակները հիվանդության լավացման շրջանում՝ կախված ախտանիշների տևողությունից և արտահայտվածությունից, ներկայացված են աղյուսակ 2-ում, որից բխում է, որ հիվանդության լավացման շրջանում ԻԼ-2-ի միջին մակարդակը հավաստիորեն բարձր է եղել փսիխման հաճախականությամբ պայմանավորված հիվանդության ծանր ընթացքի դեպքում:

Աղյուսակ 2

Ցիտոկինների մակարդակների համեմատությունն ըստ տենդի, լուծի և փսիխման տևողության և արտահայտվածության հիվանդության լավացման շրջանում

Բնութագիր		ԻԼ-2 (պգ/մլ)	ՈւՆԳ-α(պգ/մլ)	ԻԼ-10 (պգ/մլ)	
Տենդ (n=65)	Տևողություն	մինչև 5 օր	0,3±1,7	0,9±2,0	18,1±14,8
		5 օր և ավել	0±0	0,8±1,9	24,4±24,3
	Արտահայտվածություն	Սուբֆեբրիլ	0,9±3,2	0,2±0,4	14,9±7,3
		Ֆեբրիլ	0±0,2	1,0±2,1	22,4±20,9
		Հիպերֆեբրիլ	-	-	-
Լուծ (n=66)	Տևողություն	մինչև 5 օր	0,5±2,3	0,7±1,9	24,4±18,8
		5 օր և ավել	0±0	0,9±2,0	18,9±19,4
	Հաճախականություն	0-5 անգամ	0,3±1,7	1,0±2,3	19,1±15,4
		6-10 անգամ	0,1±0,3	0,5±0,7	23,8±24,6
		11 և ավել	0	1,4±2,1	23,6±29,3
Փսիխում (n=62)	Տևողություն	մինչև 5 օր	0	0,7±1,6	23,2±21,8
		5 օր և ավել	0,8±2,9	1±3,1	12,6±5,7
	Հաճախականություն	0-5 անգամ	0	0,8±1,6	22,8±21,8
		6-10 անգամ	0	1,2±3,5	15,6±12,7
		11 և ավել	2,2±4,9*	0,3±0,2	13,7±5,8

* առկա է վիճակագրորեն հավաստի տարբերություն համեմատած 0-5 և 6-10 անգամ փսիխոզների հետ (p=0,003)

Հետազոտության խնդիրներից է եղել համեմատել ՌԿՎ կլինիկական բնութագիրը և ցիտոկինային պատասխանը երեխաների տարբեր տարիքային խմբերում (ինչպես նշված է նյութ և մեթոդներ բաժնում): Հետազոտված 126 երեխաներից 55,6%-ը կազմել են 2-5 տարեկանները՝ մեծերի խումբ, մնացածը՝ մինչև 2տ. փոքրերի խումբ: Այսպես, փոքրերի տարիքային խմբում մինչև 5-րդ օրը ջերմել են հիվանդների 58,2%-ը, իսկ մեծերի՝ 69,5%-ը [աղյուսակ 3]: Փոքր տարիքային խմբում հիվանդների զգալի մեծամասնությունը ջերմել է ֆեբրիլ թվերի վրա (82,5%), սուբֆեբրիլ ջերմել են հիվանդների 15,9%-ը, և միայն մեկ հիվանդի մոտ է դիտվել հիպերֆեբրիլ տենդ: Մեծերի տարիքային խմբում նույնպես գերակշռել են ֆեբրիլ տենդ ունեցողները (67,2%), սուբֆեբրիլ ջերմոդների տեսակարար կշիռն այս խմբում ավելի մեծ է եղել՝ 31%,

հիպերֆեբրիլ տեղի նույնպես ունեցել է 1 հիվանդ: Տենդի բնութագիրն ուսումնասիրելիս տարիքային խմբերում վիճակագրորեն հավաստի տարբերություն չի դիտվել: Փոքրերի խմբում հիվանդների գերակշռող մեծամասնությունն (71,2%) ունեցել է 5 օրից ավել պահպանվող լուծ, այն դեպքում, երբ մեծերի խմբի մոտ կեսի շրջանում է դիտվել երկարատև լուծ, ինչը հաստատվեց նաև վիճակագրական համեմատությամբ ($p=0,022$): Ինչպես փոքր, այնպես էլ մեծ տարիքային խմբերում գերակշռել է ոչ արտահայտված լուծը՝ մինչև 5 անգամ օրեկան՝ կազմելով համապատասխանաբար 63,6% և 69,6%, իսկ 11 և ավել անգամ լուծը կրկնակի հաճախ դիտվել է փոքրերի մոտ, սակայն վիճակագրորեն հավաստի տարբերություն չի դիտվել:

Աղյուսակ 3

Տենդի, լուծի և փսխման բնութագիրը ՌԿՎ հիվանդների տարբեր տարիքային խմբերում


Ախտանիշներ			Փոքր տարիք. խումբ		Մեծ տարիք. խումբ		P
			Հիվ. թիվ	Հիվ. %	Հիվ. թիվ	Հիվ. %	
Տենդ	Տևողություն	մինչև 5օր	39	58,2	28	41,8	0,13
		5 օր և ավել	41	69,5	18	30,5	
	Արտահայտվածություն	սուբֆեբրիլ	10	15,9	18	31	0,139
		ֆեբրիլ	52	82,5	39	67,2	
	հիպերֆեբրիլ	1	1,6	1	1,7		
Լուծ	Տևողություն	մինչև 5օր	19	28,8	27	48,2	0,07
		5 օր և ավել	47	71,2	29	51,8	0,022
	Հաճախականություն	0-5 անգամ	42	63,6	39	69,6	0,713
		6-10 անգամ	20	30,3	15	26,8	
		11 և ավել	4	6,1	2	3,6	
Փսխում	Տևողություն	մինչև 5օր	49	83,1	46	80,7	0,465
		5 օր և ավել	10	16,9	11	19,3	
	Հաճախականություն	0-5 անգամ	50	84,7	43	75,4	0,453
		6-10 անգամ	7	11,9	11	19,3	
	11 և ավել	2	3,4	3	5,3		

Փոքր և մեծ տարիքային խմբերում գրեթե հավասարապես դիտվել է մինչև 5 օր տևող փսխում (83,1% և 80,7% համապատասխանաբար): Փսխման հաճախականությունը ուսումնասիրելիս երկու տարիքային խմբերում էլ գերակշռել է օրեկան մինչև 5 անգամ փսխումը՝ կազմելով փոքրերի մոտ 84,7%, իսկ մեծերի մոտ՝ 75,4%: Առավել հաճախակի փսխումը (11 և ավել անգամ) դիտվել է մեծ տարիքային խմբում: Հավաստի տարբերություններ չեն եղել: Համեմատվել է 8Կ-ների նորմայից բարձրացման հայտնաբերման հաճախականությունը երեխաների տարբեր տարիքային խմբերում սուր և լավացման շրջաններում: Հավաստի տարբերություններ չեն դիտվել: Տարիքային խմբերում համեմատվել են նաև ցիտոկինների միջին մակարդակները հիվանդության սուր և լավացման շրջաններում: Սուր փուլում փոքր տարիքային խմբում հետազոտվել է 48 երեխա, որոնց մոտ ԻԼ-2-ի միջին մակարդակը կազմել է 0,3±1,0պգ/մլ, ՈԻՆԳ-α-ինը՝ 0,5±1,2 պկ/մլ, իսկ ԻԼ-10-ինը՝ 40,0±47,7պգ/մլ: Մեծ տարիքային խմբում հետազոտվել է 45

երեխա, որոնց մոտ դիտվել է ԻԼ-2-ի և ՈՒՆԳ- α -ի գրեթե նմանատիպ արդյունքներ՝ $0,2 \pm 1,0$ պգ/մլ և $0,6 \pm 1,4$ պգ/մլ համապատասխանաբար, այն դեպքում, երբ ԻԼ-10-ի մակարդակը հավաստիորեն ավելի ցածր է եղել փոքրերի խմբի համեմատությամբ կազմելով $25,7 \pm 25,8$ պգ/մլ ($p=0,02$): Լավացման շրջանում փոքր տարիքային խմբում ուսումնասիրվել է 35 երեխա, որոնց մոտ ԻԼ-2-ի և ԻԼ-10-ի միջին մակարդակները դինամիկայում իջել են՝ կազմելով $0,1 \pm 0,3$ պգ/մլ և $23,1 \pm 23,2$ պգ/մլ համապատասխանաբար, իսկ ՈՒՆԳ- α -ի մակարդակը բարձրացել է՝ $0,8 \pm 1,8$ պգ/մլ: Մեծ տարիքային խմբում ուսումնասիրվել է 33 երեխա, որոնց մոտ բարձրացել են ԻԼ-2-ի ($0,3 \pm 1,9$ պգ/մլ), և ՈՒՆԳ- α -ի ($0,8 \pm 2,1$ պգ/մլ) միջին մակարդակները, իսկ ԻԼ-10-ի արժեքը նվազել է՝ կազմելով $17,8 \pm 13,2$ պգ/մլ, սակայն վիճակագրորեն հավաստի տարբերություն սուր շրջանի համեմատությամբ չի դիտվել [նկար 4]:

Նկար 4

Ծիտոկինների միջին մակարդակները երեխաների տարբեր տարիքային խմբերում հիվանդության սուր և լավացման շրջաններում



Հետազոտության խնդիրներից է եղել նաև ուսումնասիրել կլինիկական բնութագիրը և ցիտոկինային պատասխանի առանձնահատկությունները մոնո- և համակցված ՌՎՎ դեպքում: Մոնովարակի դեպքում տեղի միջին տևողությունը կազմել է $4 \pm 2,2$ օր, արտահայտվածությունը՝ $38,4 \pm 0,7^\circ\text{C}$, փսխման միջին տևողությունը եղել է $3 \pm 1,5$ օր, հաճախականությունը՝ $5 \pm 3,3$: Լուծի միջին տևողությունը այս խմբում կազմել է $5 \pm 2,6$ օր, հաճախականությունը՝ $5 \pm 2,8$: Համակցված վարակի դեպքում տեղի միջին տևողությունն ավելի երկար է եղել՝ կազմելով $5 \pm 2,1$ օր, արտահայտվածությունը՝ $38,7 \pm 0,8^\circ\text{C}$, որը դարձյալ ավելի բարձր է, քան մոնովարակի դեպքում: Փսխման միջին տևողությունը գրեթե նույնն է եղել ($3 \pm 1,6$ օր), իսկ հաճախականությունն ավելի քիչ՝ $4 \pm 1,7$: Համակցված վարակի դեպքում լուծը պահպանվել է ավելի երկար ($6 \pm 2,8$ օր), քան մոնովարակի դեպքում: Հետաքրքիր է նշել, որ համակցված վարակի դեպքում հիվանդները լուծել են վիճակագրորեն հավաստի ($p=0,04$) ավելի հաճախ $7 \pm 4,2$, քան մոնովարակի դեպքում:

Մոնոլարակի դեպքում մինչև 5-րդ օրը ջերմել են հիվանդների 65,3%-ը, [աղյուսակ 4]: Հիվանդների զգալի մեծամասնությունն (75,5%) ունեցել է ֆեբրիլ տենդ, սուբֆեբրիլ ջերմել են հիվանդների 24,5%-ը, հիպերֆեբրիլ տենդ չի դիտվել: Համակցված վարակի դեպքում մինչև 5-րդ օրը ջերմել են հիվանդների 34,7%-ը, նույնպես գերակշռել են ֆեբրիլ տենդ ունեցողները (73,9%), սուբֆեբրիլ ջերմոդների տեսակարար կշիռն այս խմբում ավելի փոքր է եղել՝ 17,4%, հիպերֆեբրիլ տենդ ունեցել են ընդամենը 2 հիվանդ:

Աղյուսակ 4

Ռ-ՎՎ հիվանդների շրջանում տենդի, փսիսման և լուծի բնութագրերը մոնո- և համակցված Ռ-ՎՎ վարակների դեպքում

